# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-25/41

Մեծամորի Համայնքապետարանի կարիքների համար համակարգչային ծրագրերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԾՁԲ-25/41 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստում անհրաժեշտություն է առաջացել տեխնիկական բնութագիրը շարադրել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերով ներկայացված ծառայության նկարագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

1. Կատարողը պատվիրատուին հանձնում է Մեծամոր համայնքի ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ների համար 18 (տասնութ) աշխատատեղով համակարգչային ծրագիր (այսուհետ՝ ՀԾ Համակարգ): Ծրագիրը պետք է ապահովի՝ ՀՀ կառավարության 2015թ. մարտի 26-ի N 313-Ն որոշմանը համապատասխանող համակարգչային ծրագրին ներկայացվող պահանջները (Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը եվ դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին որոշում)

2. Թույլատրում է օրենքով նախատեսված գույքային իրավունքների գործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում՝ նաև անժամկետ, օգտագործել Համակարգը: 3. Տրամադրում է ծրագրի ուսուցման դասընթացի մասնակցության կտրոններ 18 (տասնութ) անձի համար:

4. Իրականացնում է Պատվիրատուի կողմից նշված հասցեներում համակարգի տեղադրման աշխատանքներ և նպաստում է ծրագրի անխափան աշխատանքնին:

5. Կատարողը սպասարկում է Պատվիրատուի կողմից նշված հասցեներում տեղադրված Համակարգը, ինչը ներառում է՝ համակարգի շահագործման հետ կապված խորհրդատվություն, կատարողի կողմից որոշված պարբերականությամբ, Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերվող լրամշակումներ և նոր ֆունկցիոնալ հնարավորություններ: Համակարգի թարմացված տարբերակները տրամադրվում են Կատարողի կողմից ընտրված եղանակներով:

6. Սպասարկման ծառայություններն իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, հեռահար միացում, ինտերնետ, էլ.փոստ և այլն) միջոցներով, դրա անհնարինության դեպքում Կատարողը սպասարկումը պետք է իրականացնի Պատվիրատուի նշած հասցեում:

7. Մեծամորի համայնքապետարանին Կատարողը տրամադրում է դիտման հնարավորություն 18 աշխատատեղերի մասով, ՀՈԱԿ-ների կատարած աշխատանքները վերահսկելու համար:

8. Մատակարարը պետք է ունենա առնվազն վերջին 4 տարվա հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահության ավտոմատացման ծրագրային ավտոմատացման մշակման, ներդրման, ուսուցման և սպասրկման փորձ:

9. Մեկ տարվա ծրագրի սպասարկում:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի Համայնքապետարանի